## Արձանագրության 4
## ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

20.11.2019թ.
ժամը՝ 11:20

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Գ. Նավասարդյան /ԳԱՊ/ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Գ. Հարությունյան, Գ. Ավետիսյան, Լ. Մովսիսյան, Հ. Հարությունյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Թ.Հովեսյան |

### 1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

---

(Գ. Նավասարդյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն և մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5դեմ - 0:*

### 2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

---

(Գ. Նավասարդյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| ՄԵԳԱՄԵՏՐ ՍՊԸ | Բավարար |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5դեմ - 0:*

### 3. ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/2ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Գ. Նավասարդյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «**ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/2**» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել չափաբաժնի մասով «ՄԵԳԱՄԵՏՐ» ՍՊԸ-ին, և վերջինիս ներկայացնել «**Երևան քաղաքի Խ. Աբովյանի**

**անվան պուրակի վերականգնման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների»** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Գ. Նավասարդյան |
| Անդամներ՝ | | Գ. Հարությունյան |
| | | Գ. Ավետիսյան |
| | | Լ. Մովսիսյան |
| | | Հ. Հարությունյան |
| Համակարգող՝ | | Թ.Հովեսյան |